

ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՊԱՆԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԽՈՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ս.Ս. Մանուչարյան

Բարբառի բառապաշարը ոչ միայն լեզվի, այլև բարբառի պատմական զարգացման ուղին է մատնանշում, հետևաբար այն տարածամասակյա կազմավորման արդյունք է, և նրա մեջ մտնող բառաշերտերը ևս ձևավորվել են որոշակի ժամանակաշրջանում՝ հետագայում ենթարկվելով զանազան փոփոխությունների:

Կապանի տարածաշրջանի խոսվածքները քերականական և հնչյունական համակարգերի քննությամբ առանձնանում են Ում և Ս ճյուղերի բարբառային իրողություններով, սակայն բառիմաստի փոփոխությունների դեպքում դրանք չեն սահմանազատվում և տարբերակվում:

Ինչպես գրական, այնպես և խոսակցական լեզվի բառապաշարում մի խումբ բառեր ժամանակի ընթացքում իմաստով անփոփոխ չեն մնացել: Իմաստափոխվելով գործածվել են ընդհանրապես կամ մասնակիորեն տարբերվող իմաստներով, այսպես՝ **այծահազ**>իծ ան հան գ<«կեղծ հազ», **անդամ**>անդեմնը «կենդանու կամ թռչունի ազդր», **բլշանալ**>պիլիշել//պրլըլել ոչ թե՛ «շլանալ», այլ՝ «աչքերը հառնի», **գայլագռավ**>կրռակլավ «չարագուշակ», **դարման**>տերման «հարդ», **ելանել**>իլ/լիլ «նռալով թափվել», **կայծ**>կեծ «այրող», **կիզուլ**>կրզնրվել «բառացի՝

վառվել, 2. բարկանալ», **հացահան**>ծրհան ոչ թե՛ «թաթակիշ», այլ «լավաշը թոնրից հանելու կեր ծայրով երկաթյա ձող», **հուլով**>հուլուլ«սայլակ», **շփոթ**>շրփոթ «այլուրից պատրաստված թանձր շիլա», **պատճառաոր**>պատճառավեր «հղի», **վրդրկ ու նել** «վախից գունատվել, սփրթնել», **ցայտ**>ցեթ «մեզ», **ունկն**>օնգուն «կանթ՝ ամանների բռնատեղ» և այլն: Բառիմաստի փոփոխություններ են տեղի ունեցել նաև տարբեր ժամանակաշրջանների փոխառություններում, ինչպես՝ **գոն և սքան** (պրսկ. gonahkar «հանցավոր») [9,508] ոչ թե՛ «մեղավոր», այլ՝ «սպառախ», **դագանակ** (թրք. degneg) [7,481] >դիգան անկ ոչ միայն՝ «հաստ գլխով երկար

մահակ», այլև՝ փոխաբերաբար «կռիվ, ծեծ», նաև՝ **խարբալնի(խարբալ** սառ. ‘arbālā «մաղ») [4,342-343] >խրլրփան լել բայը կիրառվում է ոչ թե՛ «մաղել» իմաստով, այլ «1. ուշաթափվել, 2. տագնապել, 3. փխբ. աճապարել»: Նշված իմաստներից առաջինը, ինչպես վկայում է Հ. Աճառյանը, հանդիպում են **խնլքամաղ լինել** «ուշքից գնալ» հարադրությամբ:

Նկատելի է, որ քննվող բարբառային միավորներում գրաբարյան բազմիմաստության փոխարեն առկա է մենիմաստություն, որը համապատասխանում է կամ հիմնական, կամ երկրորդական իմաստներից մեկին, ինչպես՝ **բարձ**>պերց «1. **գլխի տակ դնելու բարձ**, 2. նստելու բարձ, որ պատուի նշան էր, 3. պատուի աստիճան, 4. նավի նստարան, եռանկեան խարիսլը՝ որի վրայ նստում է եռանկիներ, 5. մարմնի բարձք, երանք, ազդր» [3,425-426], **գեջ**>կեձ«1.

խոնատություն, թագություն, խոնալ, 2. վառաշոտ, ցանկատեր, անառակ» [3,550-551], **դնել**>տը

նել//տի նիլ<1. **դնել**, 2. համարել, 3. ենթադրել, 4. կարգել, 5. անել, 6. վերածել, 7. տալ, 8. հասցնել»[3,675], **դոտն**>տոն ու ն(ն)ը<1. **դոտ**, 2. կիրճ, լեռների մեջ անցք, 3. պալատ, 4. սպասատր, 5. գրքի գլուխ» [3,684-685], **լսել(ք)** >լսել/ըլք «1. գլխի ուղեղ, 2. **միտք, բանականություն, հանճար**, 3.

հնարք, վարպետություն, 4. կամուրջի գլուխը, 5. նալի դնկի կողմը, 6. նալի նստարանները, 7. տան կտորը» [4,355], **սրահ**>սրհար/սահար «1. մեծ սենյակ, 2. դահլիճ, 3. սրահի մեջ կախուած վարագույր կամ պատի զարդ, 4. **նախարար**» [6,281-282], **տաշտ**>տաշտ «1. բաժակ, գալաթ, թաս, 2. խնկաման, 3. **կոնք**, 4. կթոց, կողով, 5. ձիու գալակը պաշտպանող մի տեսակ գրահ, 6. մի տեսակ երաժշտական յազ» [6,370-371], **փոր**>փոր«1. ծակ, պարապություն, մեջը փոս տեղ, 2. սին,

մէջը ծակ, սնամէջ, պարապ, 3. **որովայն**, արգանդ, սիրտ, ընդերք, 4. ընդունարան, միջուկ իրաց» [6,518-519] և այլն:

Մի խումբ բառեր, չնայած իմաստափոխվելուն, այնուամենայնիվ ինչ-որ աղերսներ ունեն իրենց նախնական իմաստի հետ, օր.՝ **արջ**>առջ «1. արջ կենդանի, 2. կռպիտ, 3. ածախա», **ապրանք**>ապրանք «1. անասուն, 2. վաճառվող իր», **առ իս**> **առիս** «1. ինձ մոտ, կողքիս, 2. ձեռքումս», **բնկ**>պէկ «1.կոտրված, 2. ավերված տնատեղ», **նռալ**>հրռալ«1.նփնի, 2. ուժեղ ցավել», **ընտրել**>հրնդրել «1. առանձնացնել, 2. ընդունելը կամ կանաչեղենը մաքրել», **ծուխ**>ծօխ «1.վառարանի մուխ, 2. տնտեսություն, ընտանիք», **կատար**>կատար «1.աբլուրի գլխի ցցունքը, 2. մարդու գլուխ», **կնդել**>կընթել «1. փնտել, 2. շարշարել, կեղեքել, հարստահարել, 3. մեկի ունեցածքը հափշտակել, մաքրագարդել», **մեկնել**>մըկնել «1. ձեռքը երկարել, 2.իրերը փռել», **յուշապ**>օշափ «1.վիշապ, 2. շատ քնոդ, 3. շատակեր», **որձ**>վէ / ը րգ «1. արու, 2. կարծր, պինդ, չոր,

3. արու ոչխար», որից էլ՝ «2-3 տարեկան արու ոչխար», **պոկ գալ**>պուք կնն «1. պոկվել, 2. փախչել», **պոկել**>պուք տալ«1. անջատել, 2. ինչ-որ բան ձեռք գցել», **ջախջախել**>ճըճէլսէլ«իբր տարբեր տեղերից խոցոտել», **սահման**>զահման «1. որոշիչ չափ, 2. արտերի կամ այգիների բաժանող եզրագիծ», **տափ**>տափ «1. հարթ տափարակ դաշտ, 2. գետին» և այլն: Նշված բառախմբում դասում են այնպիսի բառեր, որոնցում բառիմաստի նեղացում է տեղի ունեցել, այսպես՝ **արջառ**>աչառ//**ան չան** գործածվում է ոչ թե՛ «տաւար, ընդհանուր անուն կովի, ցուլի, եզան, հորթի և երկնիցի» [3,335] իմաստով, այլ՝ «կամի լծվող երեք տարեկան արու հորթ», **թան**>թան ոչ թե՛ «ապուր, թաց ուտելիք» [4,149], այլ՝ «հարած կամ ջրով բացած մածուն», **ծին**>ծ ը ն ոչ թե՛ «1.ծնունդ, ծագում, բունը, 2. արգանդ, 3. մարմնի վրայ բնական նիշ, խալ» [4,457], այլ՝ «կաթնասունների ծնունդ», **կուրծ**>կօ / օ րծ ոչ թե՛ «1.լանջք, 2. ստինք» [4,666-667], այլ՝ «կաթնասունի ստինք»:

Որոշ բառեր գործածվում են և՛ իրենց բուն, և՛ այլ նշանակությամբ, ինչպես՝ **բանալի**>պի / ի լննի «1. կողպերքը բացելու կամ փակելու իր, 2. հյուծված, նիհար», **գաք**>կէփ «1. կեռ փայտ պարանի ծայրին, 2. ոտք(վիրավոր.), 3.ագոթ», **կապել**>կապել «1. հանգուցել, 2. ոռոգման ջուրը բաց թողնել», **կայծանալ**>կըծանալ «1.շատ տաքանալ, 2. գայրանալ, կատաղել», **կաչաղակ**>քըչէղակ «1.թռչունի տեսակ, 2. տղեղ», **մաշիլ**>ման շվել «1.հնանալ, 2. նիհարել», **ննդանալ**>նըղանալ «1. վիրավորվել, 2. ննդ լինել (հագուստը), 3. հոգնել», **շողք**>շօխք «1. ճառագայթ, 2. ստվեր», **սայր**> ս ը / է ն «1. լեռան ծայր, 2. լեռան ող, 3. մարդու ողնաշար»,

պատ>պա / ա տ «1. շրջան, պտույտ, 2. որմ, 3. շարք, 4. գուլպայի մեկ հյուսքը», **ուզել**>օ գ էլ«1. կամենալ, 2. սիրել, 3. ամուսնանալ», **փայտանալ**>փրդանալ//փ ի դ նն նն լ «1. փայտի նման դառնալ, 2. սառչել, մրսել», **քաջք**>քաշկ «1.չար ոգի, 2. վատ լուր հաղորդող» և այլն:

Այս խմբի մեջ դասում են նաև այնպիսի բառեր, որոնք բազմիմաստ են և՛ գրաբարում, և՛ ենթաբարբառիս խոսվածքներում, այսպես՝ **անցանել**>անց կէնալ «1. **անցնիլ**, **երթալ**, 2. **առաջ անցնիլ**, 3. գերազանցել, 4. **չափից ու սահմանից անցնիլ**, 5. գանց առնել, 6. մարիլ, 7. ոչնչանալ, 8. պատահիլ, 9. պարապիլ մի գործով կամ խօսքով, 9. մեռնիլ» [3,212-213], բաժանել>պը / ի ժ նն էլ «1. **մաս-մաս անել**, 2. սփռել, 3. **անջատել**, 4. գանազանել, **ջոկել**» [3,381], **դար**(ասոր. dār)>դար «1. **անորոշ թուով տարիների մի մեծ շրջան**, 2. մեկ սերունդ, մի պորտ, 3. **100 տարի**» [3,631] **երես**>իրես «1. **դէմք**, 2. **մակերևոյթ**, 3. անձ, 4. աչք, 5. երեսպաշտութիւն, 6. կեղծաւորութիւն, 7. դիտաւորութիւն, 8. նպատակ» [4,46-47], որոնցից ընդգծվածները գործածական են խոսվածքներում:

Բազմիմաստությունը հաճախ պայմանավորված է բարբառային տարբերակի տարբեր ծագմամբ, որն էլ խոսակցական լեզվում ստեղծում է համանունություն, օր.՝ **կօ / օ նդ** նշանակում է «1. գնդաձև մարմին, գնդակ, 2. մարդու գլուխ, 3. սոխուկ, 4. անդամալույծ», այսպես՝ **գունդ**

(պիլ.*gund «գունդ, գնդակ, գնդաձև») > կօ/օ նդ «1. **գնդաձև մարմին**, 2. երկնակամար, արևի կամ լուսնի գունտը, 3. ճրագարանի գնդաձև մասը, 4. ծովի խորությունը չափելու գործիք, 5. սայլի անի, 6. **մարդու գլուխ**» [3,593-594], **կունդ** (պրսկ. kund, kunda «կոճղ») «փխբ. անդամալույծ», **կոնդ** «1. մի քանի բույսերի գնդաձև արմատ, սոխուկ, 2. նմն. մարդու գլուխ» [8,467], **կօ/օ շտ** «1. որովայնը լցրած, հագնցած, 2. կոպիտ, պինդ», որի առաջին իմաստը առկա էր գրաբարում, ինչպես՝ **կուշտ** (պիլ. *kušt) [4,660] «1.կող, 2.փոր» > կօ/օ շտ (վերջինիս մյուս՝ «կող» իմաստն էլ պահպանվել է **կշտին** > քրշտե/է ն//ք ի շտին «կողքին» բառաձևում), երկրորդը գրական լեզվից անցած **կոշտ** «ոչ փափուկ» ածականն է, **կօ/օ րծ**՝ «1. գործ, 2. կաթնասունի ստինք», որոնցից առաջինը **գործ** «աշխատանք» բառն է, երկրորդը՝ **կործ(ք), թօզ**՝ «1. մրգի տեսակ, 2. փոշի», որոնցից «թուզ պտուղը» [4, 201-202] առկա էր գրաբարում, իսկ երկրորդը հետագա դարաշրջանների տաճկաթուրքական փոխառություն է՝ «թօզ (տաճկ. toz) -փոշի» [8,133], **ծուրդուրու**՝ «1. արյուրի կանչի անվանում, 2. ընկույզի միջուկ, միջնափայտ, 3. փխբ. շատ նիհար», որոնցից առաջինը գրական փոխառություն է, իսկ մյուսները բարբառային են՝ «ընկույզին ամբողջական միջուկը» [2,527], **շօ/օ ք**՝ «1. տոթ, 2. հով». առաջին ձևը ծագում է **շոգ** «տաքություն, տոթ» [5,528] բառից, երկրորդը՝ **շուք**-ից «ստվեր, հովանի» [5,541]: Նշված օրինակների որոշների նախաձևերից նկատելի է, որ համանունությունը պայմանավորված է **ու>օ/օ** և **գ>կ** հնչյունական անցումներով, որոնք բնորոշ են քննության առարկա խոսվածքներին:

Մեր կողմից ուսումնասիրվող բարբառային միավորներում բառիմաստի ընդլայնում է տեղի ունեցել, երբ գրաբարյան մասնավոր իմաստի դիմաց բառը ընդհանրական իմաստ է ստացել, ինչպես՝ **ագատ** > ագատ/դ գրաբարում «1. ագնուական, 2. անկախ, ինքնիշխան, ագատուած, արձակ» [3,83], իսկ ենթաբարբառի խոսվածքներում՝ «ագատ/դ» ընդհանրապես, **թեփ** > թեփ «1. մաշկաձև կեղևանք գորենի, 2. ձկան թեփ» [4,178] իմաստները, այնինչ խոսվածքներում՝ «թեփ» ընդհանրապես, **փոշի** > փօ/օ շի «1. մանած հող, 2. ավազ, փոշի» [6,516], **փոս** > փօս «1. փոս տեղ, 2. քրի անցք, 3. խրամ» [6,517], մինչդեռ խոսվածքներում դրանք մեկ ընդհանրական իմաստ ունեն:

Ինչպես երևում է վերոբերյալ օրինակներից, իմաստափոխական երևույթները բացատրվում են բառիմաստի նեղացմամբ և ընդլայնմամբ, նմանական և կցորդական գույքորոշյալմբ, նաև փոխաբերական գործածությամբ [1,137-151]: Իմաստափոխված դեպքերը ավելի ակնառու են տվյալ բարբառին բնորոշ դարձվածքների, առածների ու ասացվածքների մեջ, այսպես՝ **թօռլ յէկալ ա, ճաքերը հրվասարվալ ըն** «վիրավորանքը մոռանալ», **թօռլ նի կ̄ ւ̄ ւ̄ ւ̄ վ** «անձրև սկսվեց», **թօռլ յէտ ա կ̄ ւ̄ ւ̄ ւ̄** «անձրևը կտրվեց», **իռէսիէն ճի րւ̄ ւ̄ վ քի նի ի լ** «պատվը պահպանելով ամուսնանալ», **ծառլ ուլրւ̄ ւ̄ ծըռատակէն խաբար կանէ** «հարագատին վկայակոչել», **կըրակէն յէրա/յի րւ̄ ւ̄/յըրա յէղ ա ածում/ածիս** «բորբոքել», **պոլ լ էրը կօխ տալ** «1. խմորի գնդերը

տրորել, 2. չափ ու սահմանը անցնել», **պըռօ անէլ** «լացակումել», **մըկան/մօկնէն ծակը հախավ ա ինք օնում/օնիս** «վախենալով խուսափում է», **նախշուտ իրէսէն փըլավ չըն օտում/օտիս** «զննվելուց չեն խաբվում», **տանձի կօթ տըռնալ** «շատ նիհարել», **վըղըճաք/լըղըճաք նիլ** «սարսափել», **պօղ տըռնալ** «բարկությունից կարմրել», **վէ նդ// վէ ց ը// վը նդ// վը ց ը թակած կ̄ ւ̄ ւ̄**

«1. հետիոտն գալ, 2. դժվարությամբ գալ» են:

Ընդհանրապես ցանկացած բարբառային միավոր հատկանշվում է նաև իմաստափոխական այն իրողություններով, որոնք դրսևորվում են բանահյուսական տարբեր ժանրերում, որոնք էլ առնչվում են ժողովրդի կյանքի տարբեր ոլորտներին:

Գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աճառնան Հ., Հայերեն գալառական բառարան, Էմիննան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973:
5. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977:
6. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979:
7. Մալխասնանց Ստ., Հայերեն բազատրական բառարան, հ. I, Երևան 1944:
8. Մալխասնանց Ստ., Հայերեն բազատրական բառարան, հ. II, Երևան 1944:
9. Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Երևան, 1975:

Проявления семантических различий в говорах Капанской области.

С.С.Манучарян

Резюме

В данной статье обсуждаются семантические различия в говорах Кафанского региона. Придается значение расширение семантики, конкретизация и диалектические анонимы.

Manifestations of semantic different interpretations in dialects of Kapan area.

S.S.Manucharyan

Summary

In this article speech about talk of semantic realites in Kapan regions. Inportant terms meang's, particularly and dialectical analogous.